

Տուբերկուլոզով հիվանդների ՀՀՏԴ և մարզային տուբերկուլոզային բաժանմունքներ ուղեգրման բժշկական ցուցումներ

1 . ՀՀՏԴ ուղեգրվում են .

1. բոլոր 0 - 18 տարեկան բացիլազատող թոքային տուբերկուլոզով երեխաները
2. 0 - 18 տարեկան ոչ բացիլազատող տարածված, թոքային հյուսվածքի քայքայումներով կամ բարդացած ուղեկցող հիվանդություններով /թոք-սրտային անբավ., շաքարային դիաբետ, խոցային հիվանդություն, երիկամային անբավարարություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն/ տուբերկուլոզով հիվանդ երեխաները
3. 18-ից բարձր տարիքի տուբերկուլոզով հիվանդներ /բացիլազատող և ոչ բացիլազատող/՝ բարդացած ուղեկցող հիվանդություններով /թոք-սրտային անբավ., շաքարային դիաբետ, խոցային հիվանդություն, երիկամային անբավարարություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն/
4. թոքային տուբերկուլոզով հոգեկան հիվանդներ
5. թոքային տուբերկուլոզի դեղորայքակայուն ձևերով հիվանդներ,
6. ծանր արտաթոքային տուբերկուլոզ /տուբերկուլոզային մենինգո-էնցեֆալիտ, ողնաշարի, երիկամի տուբերկուլոզ, էքստոֆատիվ պլևրիտ, պոլիսերոզիտ և այլն/
7. վիրահատման ցուցումներով թոքային և արտաթոքային տուբերկուլոզով հիվանդներ

2. Մարզային տուբերկուլոզային բաժանմունքներ ուղեգրվում են.

1. բացիլազատող թոքային տուբերկուլոզով հիվանդներ /առաջնակի , կրկնակի/
2. առանց բացիլազատման տարածված, թոքային հյուսվածքի քայքայումներով տուբերկուլոզով հիվանդներ/առաջնակի , կրկնակի/;
3. բացառիկ դեպքերում արտաթոքային տուբերկուլոզով հիվանդներ, որոնք սոցիալական ծանր պայմաններից և այլ պատճառներից ելնելով հրաժարվում են “ՀՀՏԴ” ՓԲԸ մեկնելուց ու մեկնելու հանգամանքից ելնելով՝ նաև բուժում ստանալուց /հիվանդի ստորագրությամբ հաստատված փաստաթղթային հիմնավորմամբ /,
4. ախտանշանային բուժման կարիք ունեցող թոքային տուբերկուլոզի դեղորայքակայուն ձևերով հիվանդներ:

ՀՀ ԱՆ աշխատակազմի ղեկավար



Վ. Պողոսյան